

« 11 » փետրվար 2026թ. No 690 - Ա

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՆԱԲՐՈՍ ՖԱՐՄԱ ՊՎՏ. ՍՊԸ, Ն. Հ. No. 8 ԿԱԶԻՊՈՒՐԱ,
ԿՀԵԴԱ, 387411, ԳՈՒԶԱՐԱՏ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ, ԴԵՂԻ ԳՐԱՆՑՄԱՆ
ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ԻՐԱՎԱՏԵՐ՝ ՆԱԲՐՈՍ ՖԱՐՄԱ ՊՎՏ. ՍՊԸ, Ն. Հ. No. 8
ԿԱԶԻՊՈՒՐԱ, ԿՀԵԴԱ, 387411, ԳՈՒԶԱՐԱՏ, ՀՆԴԿԱՍՏԱՆ «ՆՈ-ԴՈԼ ՖԼՅՈՒ
ՊԱՐԱՑԵՏԱՄՈԼ, ԿՈՖԵԻՆ, ՖԵՆԻԼԷՖՐԻՆ (ՖԵՆԻԼԷՖՐԻՆԻ ՀԻԴՐՈՔԼՈՐԻԴ),
ՔԼՈՐՖԵՆԱՄԻՆ (ՔԼՈՐՖԵՆԱՄԻՆԻ ՄԱԼԵԱՏ) ԴԵՂԱՀԱՏԵՐ
500ՄԳ+30ՄԳ+5ՄԳ+2ՄԳ; (200/50X4/) ՍՏՐԻՊՈՒՄ» ԴԵՂԻ ՀԵՏԳՐԱՆՑՈՒՄԱՅԻՆ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Դեղերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի՝ դեղի գրանցումը, գրանցումը մերժելը, կասեցնելը և ուժը կորցրած ճանաչելը փորձագիտական եզրակացության հիման վրա իրականացնում է Առողջապահության հարցերով լիազորված պետական կառավարման մարմինը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 162-Ն որոշման N 1 հավելվածի 7-րդ կետի՝ հետգրանցումային փոփոխությունների իրականացումը կատարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված փորձագիտական կազմակերպության կողմից:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հուլիսի 18-ի N 1122-Ն որոշման 1-ին կետի՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինը դեղերի շրջանառության պետական կարգավորման ոլորտում փորձաքննություններն իրականացնում է Հայաստանի Հանրապետության առողջապահության

նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցով:

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից տրված Հնդկաստանի Նաբրոս Ֆարմա Պվտ. ՍՊԸ, Ն. Հ. No. 8 Կաջիպուրա, Կհեդա, 387411, Գուջարատ արտադրության, դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ Նաբրոս Ֆարմա Պվտ. ՍՊԸ, Ն. Հ. No. 8 Կաջիպուրա, Կհեդա, 387411, Գուջարատ, Հնդկաստան «Նո-Դոլ Ֆյու պարացետամոլ, կոֆեին, ֆենիլէֆրին (ֆենիլէֆրինի հիդրոքլորիդ), քլորֆենամին (քլորֆենամինի մալեատ) դեղահատեր 500մգ+30մգ+5մգ+2մգ; (200/50x4/) ստրիպում» դեղի անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման վերաբերյալ փորձագիտական թիվ 16227/2 առ 29.01.2025թ. եզրակացության համաձայն՝ անհրաժեշտ նյութերը և փաստաթղթերը չեն ներկայացվել փորձաքննության երկրորդ փուլի արդյունքների մասին ծանուցումից հետո 120 օրացույցային օրվա ընթացքում:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 162-Ն որոշման N 2 հավելվածի 17-րդ կետի համաձայն՝ պատասխանների ներկայացման առավելագույն ժամկետը 120 օրացույցային օր է: Փորձաքննության ընթացքում պահանջված լրացուցիչ կամ չբավարարող նյութերի ներկայացման անհրաժեշտության մասին պատշաճ կարգով տեղեկացվելուց 120 օրացույցային օրը լրանալուց հետո դրանք չներկայացվելու դեպքում փորձաքննությունը դադարեցվում է, և կազմվում է գրանցումը մերժելու վերաբերյալ փորձագիտական եզրակացություն:

Համաձայն «Դեղերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 16-րդ մասի՝ փորձաքննության արդյունքների մասին երկրորդ անգամ ծանուցումից հետո՝ 120 օրացույցային օրվա ընթացքում, պահանջված լրացուցիչ կամ չբավարարող

փաստաթղթերը չներկայացվելու դեպքում փորձաքննությունը դադարեցվում է և հետգրանցումային փոփոխությունը մերժվում է:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 162-Ն որոշման N 2 հավելվածի 58-րդ կետի՝ դեղի հետգրանցումային փոփոխություններն մերժելու վերաբերյալ հրամանն ընդունվում է փորձագիտական եզրակացությունը ստանալու պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում:

Հիմք ընդունելով «Դեղերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասը, 16-րդ հոդվածի 16 մասը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 162-Ն որոշման N 1 հավելվածի 7-րդ կետը, N 2 հավելվածի 17 և 58-րդ կետերը, ինչպես նաև իրավական և վերոգրյալ փաստական հիմքերից ելնելով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1.Մերժել Հնդկաստանի Նաբրու Ֆարմա Պվտ. ՍՊԸ, Ն. Հ. No. 8 Կաջիպուրա, Կհեդա, 387411, Գուջարատ արտադրության, դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ Նաբրու Ֆարմա Պվտ. ՍՊԸ, Ն. Հ. No. 8 Կաջիպուրա, Կհեդա, 387411, Գուջարատ, Հնդկաստան «Նո-Դոլ Ֆյու պարացետամոլ, կոֆեին, ֆենիլէֆրին (ֆենիլէֆրինի հիդրոքլորիդ), քլորֆենամին (քլորֆենամինի մալեատ) դեղահատեր 500մգ+30մգ+5մգ+2մգ; (200/50x4/) ստրիպում» դեղի հետգրանցումային փոփոխությունների ընդունումը Հայաստանի Հանրապետությունում:

2. ՀՀ առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝ սույն հրամանը երկու աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ձևով էլեկտրոնային փոստի միջոցով՝ առաքել հայտատուին:

3. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում վարչական վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով սահմանված կարգով և ժամկետներում՝ վարչական կարգով կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում՝ դատական կարգով:

Ա.ԱՎԱՆԵՍՅԱՆ



Recoverable Signature

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157